ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2013թ. թիվ 87-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ
ՀԱՄԱՐ ՏՈՒՆ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն, 2012 թվականի մայիսի 24-ի N 711-Ն և 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1392-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 130-Ն որոշման 5-րդ հավելվածի 4.1 ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. մարտի 15-ի թիվ 92 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի որոշումը՝ «ՀՀ Լոռու մարզի Ղուրսալ համայնքում բնակարան (բնակելի տուն) ստացող փախստական ընտանիքի վերաբերյալ (ընտանիքի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի):

2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետին՝

Ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. փետրվարի 7-ի N 130-Ն որոշման 5-րդ հավելվածի 4.1 կետով նախատեսված գումարի շրջանակներում բնակարանի գնման գործընթացը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մայիսի 30
ք.Վանաձոր